ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 6-Ա «09» 01 2023 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 382-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2117-Լ որոշման պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Պետական գույքի կառավարման կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի մասով և Կոմիտեն որպես համակատարող մարմին այլ պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները բաշխելու մասին» N 382-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

7 դեկտեմբեր 2021թ. N 382-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍՈՎ ԵՎ ԿՈՄԻՏԵՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ (2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2117-Լ) որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1) Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մասով Հայաստանի Հանրապետության 2021-2026 թվականների կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքների բաշխումը Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Կոմիտեն որպես համակատարող մարմին այլ պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքների բաշխումը Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման, Պետական գույքի տնօրինման և Պետական բաժնեմասի կառավարման վարչությունների պետերին՝ ապահովել Կոմիտեի մասով սույն հրամանի հավելվածներով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի կատարումը՝ սահմանված ժամկետներում:

3. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման, Պետական գույքի տնօրինման, Պետական բաժնեմասի կառավարման, Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչությունների, Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության ու Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժինների պետերին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո.

1) 20 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանի N 1 հավելվածով հաստատված 2023 թվականի, ինչպես նաև 2024 թվականի ընթացքում իրականացվող միջոցառումների համար կատարող համարվող ստորաբաժանմանը ներկայացնել իրենց մոտեցումներն ու առաջարկությունները, որոնց մասով համապատասխան ստորաբաժանումը հանդիսանում է համակատարող, իսկ 2021-2026 թվականների համար

յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 1-ը, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվան հաջորդող աշխատանքային օրը, ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն՝ 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի N 2 ձևի պահանջներին համապատասխան.

2) սույն հրամանի N 2 հավելվածով հաստատված միջոցառումների համար համակատարող համարվող ստորաբաժանումները սահմանված ժամկետներում իրականացվող միջոցառումների գործընթացների կատարման համար համագործակցեն տվյալ միջոցառման հիմնական կատարող հանդիսացող պետական մարմնի հետ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանին:

Восстановимая подпись

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Подписано: AVETISYAN ARNAK 1701920336